






Նորոգող Սառնամայրեր



MAFTEL





Համառոտ պատմություն

■ Նոբուդ Սառմայեշ արտադրական ընկերությունը, որը հիմնադրվել է 1967 թվականին ընդամենը 3,000 քառակուսի մետր նախնական տարածքով, իր նպատակն ուղղեց դեպի առևտրական և արդյունաբերական սառնարանների, դռների և պանելների արտադրությունը:

Մոտ կես դար ընկերությունն իր արտադրանքին զուգահեռ ստեղծել և աշխատեցրել է ավելի քան հիսուն արդյունաբերական սառնարաններ՝ մամթերքի, պտղի, նաև սառեցման փապուղիներ: Շնորհիվ այս տեխնոլոգիայի եւ ներդրված ֆինանսական միջոցների, այսօր ընկերությունն իր 24,000 քառ. մետրանոց տարածքում, հիսուն հոգանոց հմուտ աշխատակազմով, Իրանի Արաք քաղաքի երկրորդ արդյունաբերական քաղաքամասում հնարավորություն ունի արտադրել օրեկան 7,000 քառակուսի մետր սենդվիչ պանել, տարբեր հաստություններով արդյունաբերական սառնարանների դռներ և կանեկսներ՝ համապատասխան միջազմային ISO 9001/2008 չափանիշի:




Նորուդ Սառմայեշ

Պատվիրատուի հետ շփում

■ Ընկերության նպատակն է ոչ միայն պատվիրատուին մատակարարման միջոցներով գոհացնելը, այլև դրանց մատուցմամբ և արտադրանքի վաճառման լավագույն տարբերակների ընտրությամբ՝ պատվիրատուին ևս օգտակար լինել:

Մոտ կես դար աշխատանքային փորձառության շնորհիվ ընկերությունը պատվիրատուին աջակցում ու ծառայություն է մատուցում ընդհուպ տեխնոլոգիայի լիարժեք աշխատանքի փուլ:







Ավանդական և շինանյութերի գիշումը սենդվիչ պանելին

■ Ներկա կյանքի խնայողության և նորաձևության առավել զարգացման կարգախոսները համատեղելով՝ ընկերությունն էներգիայի բարենպաստ օգտագործման միջոցներ է առաջարկում՝ թե՛ մեկուսացման և թե՛ ավելի արդիական մեթոդների կիրառմամբ:

Մեկուսիչ հատկությամբ արտադրված պանելները հնարավորություն են ընդձեռնում այդ պահանջները համատեղ ապահովել տարբեր եղանակային պայմաններում:




Նորուղ Սառմայեշ

Սենդվիչ պանել

■ Պարզ ասած՝ երկու մետաղյա շերտերի միջև տեղադրված կարծր (rigid) պոլիուրետանը կոչվում է սենդվիչ պանել:

Նկատի ունենալով, որ պոլիուրետանը ինքնին կարծր և փխրուն նյութ է, ուստի տեղադրվելով երկու մետաղյա շերտերի միջև, օժտվում է բարձր դիմադրությամբ թե՛ մեխանիկական, և թե՛ էլաստիկական հատկություններով:



Ներկայիս ամենատարածված մետաղները, որոնք օգտագործվում են այս սենդվիչ պանելների արտադրության ընթացքում, բաղկացած են երկաթյա գալվանացված, ալյումինե և ալոզինք շերտերից, որոնք միանալով պոլիուրետանին դառնում են մեկուսիչ:

Այս արտադրության հատկանիշներն են.

- -Մեխանիկական դիմադրություն
- - Թեթև քաշ
- -Փոսածության դեմ դիմադրություն
- -Միջատների և փոքր կենդանիների ներխուժման կանխարգելում
- - Ջերմության փոխանցման ցածր գործակից
- -Կրակի դեմ դիմադրություն
- -Հարմարագին
- -Գունային բազմազանություն
- -Սահուն, արագ և էժան տեղակայում
- - Տեղակայում առանց հատուկ մասնագիտական գործիքների





Պոլիուրետան միջուկով սենդվիչ պանելի տեխնիկական տվյալներ



■ Սենդվիչ պանելի ենթամասեր

- 1- Կարծր պոլիուրետան միջուկ
- 2- Միջուկի շրջապատումը ներկված մետաղաշերտերով

Կարծր պոլիուրետան միջուկը պատրաստվում է պոլիուրետանից, իզոսիանատից և այլ բաղադրություններից:

Սենդվիչ պանելի արտադրության ամենակարևոր փուլն է պոլիուրետանի արտադրումը: Ցանկացած փոփոխություն արտադրության ընթացքում (ջերմաստիճանային, խոնավության չափանիշ, պատրաստվող նյութերի բաղադրություն) կարող է խաթարել արտադրության որակը:

Ներքո դիագրամում ցուցադրվում է պոլիուրետանի ջերմափոխանցման գործակիցը տարբեր հաստություններում:



Ինչպես նկատելի է դիագրամում, լավագույն (ցածր) ջերմափոխանցման գործակիցը լինում է 38-ից 42 կգ/մ³ խտության (դանսիտե) ընթացքում: Ուստի հարկ է նշել, որ այս խտությունից բարձր կամ ցածր լինելու պարագայում տեղի կունենա ենթափայի վատնում:


Նորուդ Սառմայեշ

■ Հետևաբար համանման խտությունը՝ արտադրության բարձր որակը ապահովելու ամենակարևոր հատկանիշն է:

Ներկված շերտերը, որոնք երկու կողմից պոլիուրետան միջուկին սենդվիչ են անում, նմանվում են արմատուրաներին ամրաբետոնում, այն տարբերությամբ, որ բարձրացնելով մեխանիկական դիմացկանությունը նաև բարձրացնում են ջերմության ճառագայթների արտացոլումը, ինչպես նաև գեղեցկացնում աշխատանքի արտաքին մակերեսը:

Շերտերի հաստությունը սովորաբար լինում են 0.4-ից մինչև 0.7 mm, այս հաստությունը երաշխավորում է սենդվիչ պանելների դիմացկունությունը հարմար կշիռով:


Ներքո նշված աղյուսակում ցուցադրվում է բեռի տոկոսությունը տարբեր սենդվիչ պանելներում, ըստ տարբեր երկարության, 0.5 mm հաստության գալվանացված և ալոզինք շերտերով:



Պանելի հաստություն	120 kg/m ²	150 kg/m ²	200 kg/m ²	250 kg/m ²	300 kg/m ²	350 kg/m ²	400 kg/m ²
5cm	2.5m	2.0m	1.50m	1.00m	1.0m	0.75m	0.6m
7.5cm	3.5m	3.0m	2.25m	1.75m	1.5m	1.25m	1.0m
10cm	5.0m	4.0m	3.00m	2.00m	2.0m	1.5m	1.2m
12.5cm	6.0m	5.0m	3.75m	2.75m	2.5m	2.0m	1.6m
15cm	7.0m	6.0m	4.50m	3.50m	3.0m	2.5m	2.0m

Արտադրության տեսականի

- 1-Առաստաղային սենդվիչ պանելներ
- 2-Պատի սենդվիչ պանելներ
- 3-Ծածկահեղույսային սենդվիչ պանելներ
- 4-Սառնադարանների սենդվիչ պանելներ
- 5-Կամլոկ (Camlock) սենդվիչ պանելներ




Նորոզ Սառմայէշ



■ Նշված հատկանիշների շնորհիվ այս արտադրության օգտագործումը շատ արագ տարածվել է արդյունաբերական սառնադարաններում և առևտրական կենտրոններում:




■ Ներքո դիագրամում ցուցադրվում է տարբեր նյութերի անհրաժեշտ հաստությունը՝ միանման ջերմափոխանցման գործակից ունենալու նպատակով



Կարծր պոլիուրետանի ջերմափոխանցման գործակից աղյուսակը՝ տարբեր հաստություններում

ջերմափոխանցման գործակից		
40	mm	0.380 W/m ² K°
50	mm	0.303 W/m ² K°
75	mm	0.244 W/m ² K°
100	mm	0.185 W/m ² K°
125	mm	0.148 W/m ² K°
150	mm	0.119 W/m ² K°

Կարծր պոլիուրետանի ջերմափոխանցման գործակից աղյուսակը՝ տարբեր հաստություններում



-273 C° = 0 K° = Absolute Zero

Նորոգ Սառմայեշ

Օգտագործման ոլորտները

- Այս ընկերության սենդվիչ պանելները ըստ օգտագործման բաժանվում են երկու տեսակի.
 - 1- Շինարարական սենդվիչ պանելներ
 - 2- Սառնադարանների սենդվիչ պանելներ



- Սենդվիչ պանելի մեկուսիչ լինելը և պոլիուրետանի միանման բաժանումը, արտադրանքի այն հատկություններն են, որոնք տեղակայելուց և շահագործման հանձնելուց հետո անփոփոխ պիտի լինեն:



- Հարկ է նշել հակառակ պարագայում բոլոր կատարած աշխատանքները եւ ֆինասական ներդրումները կը դառնան ապարդյուն:

Շինարարական սենդվիչ պանելներ


Սենդվիչ պանելների այս տեսակը հիմնականում օգտագործվում է շինությունների պատերում և տանիքներում: Այս սենդվիչ պանելների հատկություններն են սահուն և արագ տեղակայումը, գունային բազմազանությունը, մեխանիկական դիմադրությունը, հատուկ գծագրությունը, նաև գեղեցկությունը:



Սառնադարանների սենդվիչ պանելներ

Սենդվիչ պանելների այս տեսակը օգտագործվում է առևտրական և արդյունաբերական սառնադարաններում և ունի հետևյալ առանձնահատկությունները.


- 1- Մեկուսիչ է շնորհիվ կարծր պոլիուրետան միջուկի
- 2- Առանց ճեղքի միացում՝ կանխելով ջերմության փոխանցումը
- 3- Արագ և սահուն տեղակայում



Նորուղ Սառմայեշ



Ներքո դիագրամում նշված են սենդվիչ պանելների այս տեսակի ցուցանիշերը:
Սրանք ևս արտադրվում են ցանկացած երկարությամբ և հետևյալ հաստությամբ.



- 1- Պատի սենդվիչ պանել 40 mm, երկշերտ (շինարարական օգտագործմամբ) (խտությունը՝ 40 ± 2)
- 2- Պատի սենդվիչ պանել 50 mm, երկշերտ (շինարարական, և սառնադարանների ներքին միջնորմեր (խտությունը՝ 40 ± 2))
- 3- Պատի սենդվիչ պանել 75 mm, երկշերտ (շինարարական, և զրոհից բարձր նախատեսված սառնադարանների միջնորմեր)(խտությունը՝ 40 ± 2)
- 4- Պատի սենդվիչ պանել 100 mm, երկշերտ (զրոհից բարձր և՛ ցածր սառնադարանների համար նախատեսված)(խտությունը՝ 40 ± 2)
- 5- Պատի սենդվիչ պանել 125 mm, երկշերտ (նախատեսված՝ զրոհից ցածր սառնադարանների և սառեցման փապուղիների համար)(խտությունը՝ 40 ± 2)
- 6- Պատի սենդվիչ պանել 150 mm, երկշերտ (նախատեսված՝ զրոհից ցածր սառնադարանների և սառեցման փապուղիների համար)(խտությունը՝ 40 ± 2)

Նորուղ Սառմայեշ


■ Հատուկ գծագրումով սառնադարանների սենդվիչ պանելներ

Այս սենդվիչ պանելների յուրահատուկ կառուցվածքը հնարավորություն է ընձեռնում երկու սենդվիչ պանելների միահամուռ միացմանը:



Այս միացման արդյունքն է պոլիուրետանով համանման պատի կառուցումը 40 ± 2 խտությամբ:

Այս տարբերակը հնարավորություն է ընձեռնում խուսափել խտացնող նյութերի սրսկումից պանելների արանքում՝ դրանց առավել մեկուսիչ դարձնելու նպատակով, որը ամենակարևորն ախապայմաններից է սառնադարանների կառուցման գործընթացում, ինչպես որ ցուցադրված է ձախ կողմի պատկերում:






■ Առաստաղային սենդվիչ պանելներ

Սույն սենդվիչ պանելները օգտագործվում են շինարարական աշխատանքներում:



Սույն սենդվիչ պանելները անջրանցիկ լինելով և իրենց յուրահատուկ կառուցվածքով հնարավորություն են ընձեռնում անձրևային եղանակին իր 38 mm-անոց shadow line-ներից օգտվել որպես ջրորդան: Հատկանշական է, որ shadow line-ները ոչ միայն ապահովում են պանելի առավել ամրությունը, այլ կանխում վերջինիս կոռոզիան:

Սույն սենդվիչ պանելները արտադրվում են ցանկացած երկարությամբ և ներքոնշյալ հաստությամբ.



1 - Առաստաղային սենդվիչ պանել 40 mm հաստությամբ (բարձրակետում 78 mm, խտությունը՝ 40 ± 2)





2 - Առաստաղային սենդվիչ պանել 50 mm հաստությամբ (բարձրակետում 88 mm, խտությունը՝ 40 ± 2)

3 - Առաստաղային սենդվիչ պանել 75 mm հաստությամբ (բարձրակետում 113 mm, խտությունը՝ 40 ± 2)

Նորուղ Սառմայեշ

Պատի սովորական և սառնադարանների սենդվիչ պանելներ



Սենդվիչ պանելների այս տեսակի օգտագործումն առավել տարածված է:
Նստ պոլիուրետան միջուկի հաստության, այս սենդվիչ պանելները կարելի է օգտագործել և՛ շինարարության, և՛ սառնադարանների կառուցման մեջ:






■ Ծածկահեղոյսային սենդվիչ պանելներ

Սույն սենդվիչ պանելները առհասարակ ունենալով շինարարական օգտագործում նաև օժտված են առավել դիմացկանության հատկանիշով : Անգամ անուսից հասկանալի է, որ սենդվիչ պանելների միացումները բացարձակապես նկատելի չեն:



Այս սենդվիչ պանելները արտադրվում են հետևյալ երկարությամբ և հաստությամբ.





1- Ծած. սենդվիչ պանելներ 50 mm, երկշերտ (շինարարական օգտագործմամբ, խտությունը՝ 40 ± 2 կգ/սմ)

2- Ծած. սենդվիչ պանելներ 75 mm, երկշերտ (շինարարական օգտագործմամբ, խտությունը՝ 40 ± 2 կգ/սմ)

Նորոգ Սառնալեռ

■ Կամլակ (Cam lock) սենդվիչ պանելներ

Այս տեսակի ամենակարևոր հատկությունն է արագ մոնտաժ և դեմոնտաժը: Նաև այս սենդվիչ պանելների բացառիկ հատկանիշներից է հատուկ սարքերով միմյանց միանալը:



Սույն հատկանիշի շնորհիվ այս սենդվիչ պանելները հիմնականում կիրառվում են ժամանակավոր բնակարանային կացարաններում և ոչ մշտական շինարարական աշխատավայրերում, քանի որ կարելի է արագորեն միմյանցից անջատել և այլ վայրում օգտագործել:

Չարկ է նշել որ սույն սենդվիչ պանելների արտադրությունը կատարվում է հատուկ տեխնոլոգիայով և ոչ հոսքագծային եղանակով: Այս սենդվիչ պանելներն ունենում են 70 mm, 100 mm և 130 mm հաստությամբ և արտադրվում:

Նոբուդ Սառմայեշ



Նոբուդ Սառմայեշ ը ն կ ե թ ու թ յ ա ն ա թ տ ա դ թ ու թ յ ա ն տեխնոլոգիան






■ Ընկերությունն օգտագործելով գերմանական Կրոս Մաֆայի ինքնաշխատ համակարգեր և ներարկման սարքեր, հնարավորություն ունի արտադրել բարձր որակով սենդվիչ պանելներ՝ համապատասխան միջազգային չափանիշների:

Կարծր պոլիուրետան միջուկով սենդվիչ պանելները ըստ պատվիրատուի օգտագործման, կարող են լինել B2 կամ B3 տեսակի:

Հարկ է նշել Նոբուդ Սառմայեշը ներկայում Իրանի միակ գործարանն է, որ օգտվելով մասնագիտական սարքերից արտադրում է բարձր որակով արդյունաբերական սառնադարաններում օգտագործվող սենդվիչ պանելներ:

■ Բոլոր աշխատանքները արտադրության ընթացքում հսկվում են PLC-ի միջոցով ու կատարվում են ինքնաշխատ համակարգից սարքերով՝ որը երաշխավորում է միանման արտադրանքի համանման խտությունը:

Այսօր Նոբուդ Սառմայեշի արտադրության տարողությունը օրեկան 7,000 քառակուսի մետր է, որը երաշխավորում է պատվիրատուների պատվերների արագ առաքումը:



Նորոգ Սառմայեշ

Փաթեթավորման եւ
առաքման գործընթաց



■ Յուրատեսակ փաթեթավորմամբ
հնարավորություն է ընդձեռնվել
սենդվիչ պանելների նվազագույն
վնասմանը, և՛ բարձման, և՛
պարպման ընթացքում, որով նաև
երաշխավորվում է արագ և ապահով
առաքումը:




■ Արտադրանքի բարձր որակի
ապահովումը՝ անգամ առաքումից
հետո, երաշխավորում է բարձր
մասնագիտական մոտեցումը, ուստի
խորհուրդ է տրվում խորհրդակցել
ընկերության մասնագետների հետ՝
առաքման գործընթացը ձևավորելու
նպատակով:



Նորոզ Սառմայեշ

Երաշխիքի խոսք

Նկատի առնելով ընկերության
որդեգրած նպատակը՝ մեր
աշխատակազմը պատրաստ է իր
մասնագիտական խորհուրդներով
ս ի ռ ա հ ո ժ ա ռ ա շ ա կ ց ե լ
արտադրանքի նախնական փուլից՝
արտադրամասից մինչև միավորի
շահագործման հանձնումը:



Երկրորդ արդյունաբերական քաղաքամաս,
Արաք - Իրան
հեռախոս: (+98 862) 3423301 - 5
հեռապատճեն: (+98 862) 3423246
Թեիրանի գրասենյակ: (+98 21) 88829582, 88302593
w w w . n s i n d c o . c o m